

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» «-----» 2017թ.

N----Ա

### ՈՐՈՇՈՒՄ

#### ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 21-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2017 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.648-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով՝

#### Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Միսակյան փողոցի հ.2 շենքի հ.420/1՝ 15.83 քմ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.16112016-01-0143 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուսաննա Հակոբյանին, Հարություն, Արամ և Սուսաննա Սարգսյաններին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

### «ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԿՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Նախագծով նախատեսվում է Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող Աջափնյակ վարչական շրջանի Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.420/1՝ 15.83** քմ ընդհանուր մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Սուսաննա Հակոբյանին, Հարություն, Արամ և Սուսաննա Սարգսյաններին:

Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.420/1** բնակարանը, համաձայն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **16.11.2016թ. հ.16112016-01-0143** վկայականի տվյալների, հանդիսանում է Երևան համայնքի սեփականությունը:

Համաձայն Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի թիվ **1** թաղային կոմիտեի նախագահի **24.01.2017թ. տեղեկանքի՝** Սուսաննա Հակոբյանը, Հարություն Սարգսյանը, Արամ Սարգսյանը և Սուսաննա Սարգսյանը (ծնվ. **2013թ.**) համատեղ բնակվում են Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.419** և **հ.420** հասցեներում գտնվող բնակարաններում:

Քննարկվող բնակարանը փաստացի հանդիսանում է Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.419** և **հ.420** միավորված բնակարանների խոհանոցի հատվածը և այն օգտագործվում է վերոնշյալ անձանց կողմից, որոնք իրավահաստատող փաստաթղթերի բացակայության պատճառով հնարավորություն չեն ունեցել սեփականաշնորհել Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.420/1** բնակարանը:

Համաձայն բնակչության պետական ռեգիստրի **25.01.2017թ. հ.665244** հաշվառման մասին տեղեկանքի՝ Սուսաննա Հակոբյանը, Հարություն, Արամ և Սուսաննա (ծնվ. **2013թ.**) Սարգսյանները հաշվառված են Սիսակյան փողոցի **հ.2 շենքի հ.419** հասցեում գտնվող բնակարանում:

Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21-ի հ.648-Ն** որոշման հավելվածի /Ծրագրի/ **3-րդ կետի** համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ Ծրագրի **4-րդ կետի**:

Ծրագրի **4-րդ կետով** նախատեսված իրավական և /կամ/ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու **2016** թվականի դեկտեմբերի **21-ի հ.648-Ն** որոշման հավելվածի /Ծրագրի/ **4-րդ կետի 1-ից 7-րդ** ենթակետերով նախատեսված իրավական և /կամ փաստական հանգամանքները, ուստի՝ անհրաժեշտություն է առաջացել ընդունելու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ  
ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ  
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՍԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ  
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում չի նախատեսվում եկամուտների և ծախսերի փոփոխություն:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**

## Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

**«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ**

**Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ**